ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԻՉ. ՀԱՅԱՍՏԱՆԸ 76-ՐԴՆ Է

DOI: 10.52174/2579-2989_2022.3-87

Հիմնաբառեր. *տնտեսական բարդության ցուցիչ, դիվերսիֆիկացում, ապրանքի տարածվածություն, արտահանում*

Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստվել է աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

ORCID - https://orcid.org/0000-0003-2226-6435

Տնտեսական բարդության ցուցիչը հաշվարկվում է արտահանման բազմազանության և արտահանվող ապրանքների տարածվածության հիման վրա: Զարգացած երկրները, որոնք տիրապետում են արտադրական գիտելիքի մեծ ներուժի, արտահանում են բարդ ապրանքներ, ինչպիսիք են մեքենասարքավորումները, քիմիական ապրանքները, տրանսպորտային միջոցները և այլն: Իսկ զարգացող երկրները, որոնք օժտված են սակավ կարողություններով, արտահանում են բարդության ցածր ցուցիչ ունեցող ապրանքներ, ինչպիսիք են հանքարդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքները: Վերջին 20 տարիներին Հայաստանն այս առումով իր դիրքերը վատթարացրել է 25 հորիզոնականով՝ պայմանավորված արտահանման դիվերսիֆիկացման (բազմազանեցման) անկմամբ: Արտահանման դիվերսիֆիկացման և բարդ ապրանքներ արտադրելու համար անհրաժեշտ է պետության գործուն միջամտությունը՝ ռեսուրսների վերաբաշխում իրականացնելու և դրանք դեպի բարդ ապրանքների արտադրություն ուղղելու նպատակով:

Տնտեսական զարգացումը պահանջում է արտադրական գիտելիքի կուտակում, ինչպես նաև արտադրական գործընթացներում դրա կիրառում: Հարվարդի՝ տնտեսական աճի ուսումնասիրություններով զբաղվող լաբորատորիան իր մշակած տնտեսական բարդության ցուցչի (ՏԲՑ) միջոցով վարկանշավորում է երկրները՝ գնահատելով դրանց արտադրական գիտելիքի ընթացիկ վիճակը: Իսկ ինչպե՞ս է հնարավոր չափել երկրի՝ արտադրական գիտելիքով, կարողություն-

ներով օժտվածությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել վերջինիս ստեղծած արդյունքի երկու կարևոր բնութագրիչները՝ արտահանվող ապրանքների բազմատեսակությունը և համատարածությունը: Նախ՝ այն երկրները, որոնց բնակիչները և կազմակերպությունները ավելի շատ գիտելիք ունեն, ունեն այն, ինչ անհրաժեշտ է ավելի բազմազան ապրանքատեսակներ արտադրելու համար: Այլ կերպ ասած, ներդրված գիտելիքի չափը, որն ունի երկիրը, արտահայտվում է նրա արտադրության բազմազանության մեջ՝ տարբեր ապրանքների քանակով, որ նա արտադրում է: Երկրները, որոնք արտադրում են մեծ թվով բազմատեսակ ապրանքներ, միտված են ունենալու տնտեսության ավելի բարդ կառուցվածք: Երկրորդ, այն ապրանքները, որոնց արտադրության համար պահանջվում է գիտելիքի մեծ պաշար, հնարավոր է արտադրել միայն սահմանափակ թվով երկրներում, որտեղ առկա է անհրաժեշտ գիտելիք: Այսպիսով՝ կախված նրանից, թե այդ ապրանքներն ինչքանով են տարածված, այսինքն՝ քանի երկրի կողմից են արտադրվում, կարելի է դատել տվյալ երկրի տնտեսության բարդության մասին: Այն ապրանքները, որոնք թողարկվում են բազմատեսակ ապրանքներ արտադրող սակավաթիվ երկրների կողմից, ամենայն հավանականությամբ, ավելի բարդ են: Օրինակ՝ բժշկական սկանավորող սարքավորումներ արտադրում են Միացյալ Նահանգները, Գերմանիան, Ճապոնիան և մի քանի այլ երկրներ, որոնք, բացի նշված սարքավորումներից, արտադրում են մի շարք այլ ապրանքներ ևս: Ուստի կարող ենք եզրակացնել, որ բժշկական սկանավորող սարքավորումները բարդ ապրանքներ են, քանի որ արտադրվում են մի քանի երկրների կողմից, որոնք այլ ապրանքների գծով նույնպես ունեն դիվերսիֆիկացված արտադրություն: Միաժամանակ, եթե դիտարկենք մեկ այլ ապրանք, օրինակ՝ չմշակված ադամանդը, որը նույնպես մեծ տարածում չունի և արդյունահանվում է ընդամենը մի քանի երկրում, չենք կարող պնդել, որ դրա արդյունահանումը մեծ գիտատարություն է պահանջում: Այլապես այն երկրները, որոնք զբաղվում են դրա արդյունահանմամբ, օրինակ՝ Սիերա Լեոնեն և Բոտսվանան, կկարողանային շատ այլ ապրանքատեսակներ ևս արտահանել, քանի որ կտիրապետեին այն մեծաթիվ կարողություններին, որ պահանջվում է բարդ ապրանք արտադրելիս: Մինչդեռ վերջիններիս արտահանումն այնքան էլ դիվերսիֆիկացված չէ, հետևաբար՝ չենք կարող պնդել, որ

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Բարդության ամենաբարձր ցուցիչ ունեցող առաջին 5 ամենաբարդ ապրանքները (2013 թ.)[1]

Ապրանքի կոդ (SITC 4)	Ապրանքի անվանում	Ապրանքային խումբ	Ապրանքի բարդության ցուցիչ
7367	Այլ հաստոցներ՝ մետաղի կամ մետաղի կարբիդի մշակման համար	Մեքենասարքավորում	2,08
8744	Սարքեր և սարքավորումներ՝ ֆիզիկական և քիմիական անալիզի համար	Քիմիական և առողջապահական ապրանքներ	2,02
7742	Ռենտգենյան ճառագայթների օգտագործման վրա հիմնված տեխնիկա	Քիմիական և առողջապահական ապրանքներ	1,96
8821	Քիմիական արտադրանք և լապտերի նյութեր՝ լուսանկարչության մեջ օգտագործելու համար	Քիմիական և առողջապահական ապրանքներ	1,91
7373	Եռակցման, կտրող և այլ մեքենաներ և սարքեր, մասեր	Մեքենասարքավորում	1,86

[1] The Atlas of Economic Complexity: Mapping Paths to Prosperity, Ricardo Hausman et. all, 2013, https://growthlab.cid.harvard.edu/files/growthlab/files/atlas_2013_part1.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Բարդության ամենացածր ցուցիչ ունեցող առաջին 5 ապրանքները (2013 թ.)[2]

Ապրանքի կոդ (SITC4)	Ապրանքի անվանում	Ապրանքային խումբ	Ապրանքի բարդության ցուցիչ
0721	Կակաոյի հատիկներ՝ հում, բոված	Արևադարձային մշակաբույսեր և ծաղկատեսակներ	-3,10
2225	Քնջութի սերմեր	Բամբակ, բրինձ, սոյայի հատիկներ և այլն	-2,99
2320	Բնական ռետինե լատեքս, բնական կաուչուկ և մաստակ	Արևադարձային մշակաբույսեր և ծաղկատեսակներ	-2,63
2876	Անագի հանքաքար և խտանյութ	Հանքարդյունաբերություն	-2,57
2631	Չվերամշակված բամբակ	Արևադարձային մշակաբույսեր և ծաղկատեսակներ	-2,51

չմշակված ադամանդը բարդ ապրանք է: Այսպիսով՝ ապրանքը համարվում է բարդ, եթե արտադրվում է սակավաթիվ երկրներում, որոնք ունեն դիվերսիֆիկացված արտահանում և արտադրություն և արտահանում են քիչ տարածված, հազվագյուտ ապրանքներ: Երկրի տնտեսությունը համարվում է բարդ, եթե երկիրն արտահանում է բազմաթիվ և, հատկապես, քիչ տարածված, հազվագյուտ ապրանքներ: Երկրի ՏԲՑ վերջնական արժեքը տվյալ երկրի արտահանած ապրանքների բարդության ցուցիչների միջին արժեքն է: Իսկ որոշակի ապրանքի բարդության ցուցիչը տվյալ ապրանքն արտահանող երկրների ՏԲՑ միջինացված արժեքն է: Հաշվարկն իրականացվում է կրկնվող մատրիցային գործողությունների միջոցով: Ուստի որպեսզի երկիրը բարձրացնի իր ՏԲՑ արժեքը, պետք է մեծացնի բարդ ապրանքների արտահանման թիվը: Աղյուսակ 1-ում ներկայացված են առաջին 5 ամենաբարդ ապրանքներն ըստ բարդության աստիճանի, իսկ աղյուսակ 2-ում՝ բարդության ամենացածր աստիճան ունեցողները:

Իհարկե, հաշվի առնելով ցուցչի հաշվարկման մեթոդաբանությունը, պետք է նշել, որ ոչ միայն երկրների, այլև ապրանքների բարդության ցուցիչը և զբաղեցրած դիրքը տարեցտարի կարող է փոփոխվել:

ՏԲՑ-ն հաշվարկվում է՝ սկսած 1995 թ.-ից և հրապարակվում երկու տարին մեկ պարբերականությամբ (վերջինը՝ 2019 թ.)՝ օգտագործելով ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի (COMTRADE) և ԱՄՀ արտաքին առևտրի տվյալները: Ճապոնիան 1995 թ.-ից ի վեր՝ 25 տարի անընդմեջ, գլխավորում է վարկանշային աղյուսակը: Լավագույն հնգյակում են նաև Շվեյցարիան, Գերմանիան, Հարավային Կորեան և Սինգապուրը (աղյուսակ 3):

ԵԱՏՄ երկրներից առաջատարը Բելառուսն է, որը զբաղեցնում է 31-րդ հորիզոնականը 133 երկրի շարքում: Ընդ որում, եթե ԵԱՏՄ բոլոր երկրները, այդ թվում՝ Հայաստանը, 20 տարվա ընթացքում շեշտակիորեն վատթարացրել են իրենց դիրքերը, ապա Բելառուսն ընդամենը 2 հորիզոնականով է զիջել իր դիրքը՝ միաժամանակ, 0,1 տասնորդականով մեծացնելով ցուցիչը: Տարածաշրջանի երկրներից վատագույն արդյունքն ապահովել է Ադրբեջանը՝ -1,19 ցուցչով զբաղեցնելով 120-րդ հորիզոնականը:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա գծապատկեր 1-ից կարելի է նկատել, որ 2000-ականներին մեր երկիրն ունեցել է ՏԲՑ միջինից բարձր ցուցանիշ, որը սակայն տարեցտարի նվազել է: Հայաստանի դիրքի վատթարացումը և ցուցչի շարունակական անկումը պայմանավորված են չդիվերսիֆիկացված արտահանմամբ և արտահանման մեջ բարդության ցածր

[2] The Atlas of Economic Complexity: Mapping Paths to Prosperity, Ricardo Hausman et. all, 2013 https://growthlab.cid.harvard.edu/files/growthlab/files/atlas_2013_part1.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Տնտեսական բարդության ցուցիչ, 2000-2019 թթ.[3]

Առաջատար երկրներ	2019		2000		Փոփոխություն
	Տեղը	Միավորը	Տեղը	Միավորը	
Ճապոնիա	1	2.43	1	2.82	
Շվեյցարիա	2	2.19	3	2.27	+1
Գերմանիա	3	2.07	2	2.38	-1
Հարավային Կորեա	4	2.05	20	1.25	+16
Սինգապուր	5	2.00	11	1.55	+6
ԵԱՏՄ երկրներ					
Բելառուս	31	0.83	29	0.73	-2
Ռուսաստան	52	0.12	28	0.77	-24
Ղրղզստան	66	-0.04	50	0.20	-16
Հայաստան	76	-0.27	35	0.57	-41
Ղազախստան	78	-0.32	72	-0.16	-6
Տարածաշրջանի երկրներ					
Թուրքիա	40	0.61	56	0.13	+16
Վրաստան	63	-0.01	43	0.32	-20
Իրան	80	-0.35	105	-0.81	+25
Ադրբեջան	120	-1.19	77	-0.37	-43



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ ՏԲՑ շարժընթացը 2000-2019 թթ.[4]

[3] Կազմել է հեղինակը՝ https://atlas.cid.harvard.edu/rankings տվյալների հիման վրա:
[4] https://atlas.cid.harvard.edu/rankings

աստիճան ունեցող՝ հանքարդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների գերակշռությամբ: Հաուսմանի և Հիդալգոյի հետազոտությունները վկայում են, որ կա ուժեղ դրական կոռելյացիա ՏԲՑ-ի և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի միջև[5]: Եվ այն երկրները, որոնց արտահանումն ավելի բարդ է, քան ակնկալվում էր իրենց եկամուտների մակարդակի դեպքում, ունեն ավելի արագորեն աճող տնտեսություն: Մինչդեռ Հայաստանն իր եկամուտների մակարդակի համեմատ ունի ՏԲՑ ավելի ցածր ցուցանիշ, քան ակնկալվում էր, ուստի վերջինիս հետագա տնտեսական աճը կլինի չափավոր: ՏԲՑ հեղինակների՝ մինչև 2029 թ. կանխատեսումների համաձայն, ՀՀ տնտեսության միջին տարեկան աճը կկազմի 4,4%:

Տնտեսական բարդության մեկ այլ ցուցիչ էլ հաշվարկում է «Տնտեսական բարդության դիտակետ (OEC)» էլեկտրոնային հարթակը, որը նախկինում մշակվել և հրապարակվել է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի «հավաքական ուսուցման խմբի» կողմից[6]: Ցուցչի հաշվարկումն իրականացվում է գրեթե նույն մեթոդաբանությամբ՝ ընդգրկելով 127 երկիր: Վարկանշավորման մեջ ներառվում են այն երկրները, որոնք ունեն 1 մլն-ից ավելի բնակչություն և 1 մլրդ ԱՄՆ դոլարը գերազանցող արտահանում: Վարկանշավորումը հիմնվում է արտաքին առևտրի HS96 վեցանիշ դասակարգմամբ տվյալների վրա: Հայաստանն այդ ցանկում ընդգրկվել է 2013 թ.-ից՝ 0,12 միավորով զբաղեցնելով 55-րդ հորիզոնականը, իսկ հաջորդ 7 տարիների ընթացքում, տարեցտարի մեր երկրի ՏԲՑ-ն իջել է՝ 2020 թ.-ին կազմելով -0,37 միավոր, ըստ որի՝ զբաղեցնում է 77-րդ հորիզոնականը:

ՀՀ կառավարության 2021–2026 թթ. ծրագրում նշված է. «Հայաստանի տնտեսական բարդության բարձրացման նպատակով նախատեսվում է համալիր միջոցառումների իրականացում՝ միտված ձեռնարկությունների տեխնոլոգիական վերազինմանը, ինչպես նաև միջազգային նոր շուկաներ ներթափանցմանն ու առկա դիրքերի ամրապնդմանը»[7]: Դժվար չէ, սակայն, ՏԲՑ մեթոդաբանությունից նկատել, որ ցուցչի բարձրացման համար անհրաժեշտ է արտադրել բազմատեսակ ապրանքներ, որոնք նաև իրենց բնույթով կլինեն հազվագյուտ՝ հնարավորինս քիչ երկրների կողմից արտադրվող: Մինչդեռ գործող ձեռնարկությունների զուտ տեխնոլոգիական վերազինումը հնարավորություն կտա արտադրողականությունը բարձրացնելու, ինչը, իհարկե, միանգամայն դրական է, սակայն, եթե այդ ձեռնարկությունը շարունակելու է արտադրել նույն ապրանքը, ապա դրանից Հայաստանի ՏԲՑ-ն չի բարձրանա: Բացի այդ, զուտ տեխնոլոգիական վերազինումը բավարար չէ նոր տեսակի ավելի բարդ ապրանքներ արտադրելու համար, անհրաժեշտ է նաև արտադրական գիտելիքի և կարողությունների մակարդակի բարձրացում: Հետևաբար՝ պետք է նախաձեռնել համալիր միջոցառումներ, միաժամանակ, խթանել նոր ապրանքատեսակների արտադրությունն ու արտահանումը՝ այդ ամենին զուգահեռ իրականացնելով նոր պահանջարկին համապատասխան մասնագիտական կրթության ուղղությունների փոփոխություն:

2004-2019 թթ. ընթացքում ՀՀ արտահանման կառուցվածքում ավելացել են 25 նոր ապրանքատեսակներ, ինչը քանակապես քիչ չէ, սակայն ծավալային առումով, վերջիններիս կշիռը մեծ չէ, որի պատճառով էլ տնտեսության ընդհանուր բարդության ցուցիչը չի բարելավվել: 2019 թ.-ին, 2018 թ. համեմատ, ՀՀ դիրքը բարելավվել է 7 տեղով, իսկ ցուցիչն աճել է 0,17 միավորով, սակայն արտահանման կառուցվածքում էական փոփոխություն չի կատարվել, փոխարենը՝ նախորդ տարվա համեմատ աճել է ընդհանուր արտահանման ծավալը, որի շնորհիվ էլ՝ հիմնականում տեղի է ունեցել առաջխաղացում: ՏԲՑ աճին նպաստել է նաև որոշ ապրանքների բար-

[5] The New Paradigm of Economic Complexity: Pierre-Alexandre Balland, Tom Broekel, Dario Diodato, Elisa Giuliani, Ricardo Hausmann, Neave O'Clery, David Rigby: Research Policy, Volume 51, Issue 3, 2022, 104450, ISSN 0048-7333, https://doi.org/10.1016/j.respol.2021.104450 (https://www.sciencedirect.com/science/article/pii/S0048733321002420)

[6] https://oec.world/en/resources/about

[7] ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, էջ 29:

դության ցուցչի աճը: ՀՀ-ից արտահանվող մի շարք ապրանքներ, ինչպիսիք են, օրինակ, շոկոլադը, ֆերմենտացված խմիչքները, 2018 թ.-ին ունեցել են բարդության բացասական ցուցիչ, մինչդեռ 2019 թ.-ին դրանց ցուցիչն էականորեն աճել է և դարձել դրական: ՀՀ-ից արտահանված ապրանքներից 2019 թ. բարդության ամենաբարձր ցուցիչն ունեցել են «շիճուկներ և պատվաստանյութեր», «մեքենասարքավորումներ», «ավտոմեքենաներ» և «բժշկական սարքավորումներ» ապրանքախմբերը: Սակայն, այս ապրանքախմբերի արտահանման բաժինը ՀՀ ընդհանուր արտահանման կառուցվածքում շատ փոքր է, բացի այդ, դրանց մեծ մասի ծագման երկիրը Հայաստանը չէ, այսինքն՝ այդ ապրանքների արտադրությունը Հայաստանում չի կազմակերպվում, և հիմնականում վերարտահանում է:

Այսպիսով, ՀՀ արտահանումը գերազանցապես բաղկացած է բարդության ցածր ցուցիչ ունեցող ապրանքներից, իսկ բարդության բարձր ցուցիչ ունեցող ապրանքների մեծամասնությունը տեղական արտադրության չէ: Որպեսզի արտադրենք ավելի բարդ ապրանքներ և բարձրացնենք տնտեսության միջազգային մրցունակության մակարդակը, անհրաժեշտ է աստիճանաբար իրականացնել տնտեսության կառուցվածքային բարեփոխումներ՝ ցածր ավելացված արժեք ստեղծող ոլորտներից անցում կատարելով դեպի ավելի բարձր ավելացված արժեք ստեղծող ոլորտներ: Պետությունը խթանող որոշակի գործիքների կիրառմամբ կարող է նպաստել ռեսուրսների վերաբաշխմանը՝ հօգուտ ավելի բարդ ապրանքների արտադրության ոլորտների: Սակայն, այս ամենին հնարավոր չէ հասնել կարճաժամկետում: Հաշվի առնելով մեր երկրի արտահանման կառուցվածքը՝ պետք է սկսել այն ապրանքների արտադրությունից, որոնք թեև ավելի բարդ են, սակայն տեխնոլոգիական բարդության իրենց սահմանով շատ հեռու չեն գտնվում այն ապրանքներից, որոնք արդեն իսկ արտադրվում են: Հնարավոր չէ պետական որևէ միջամտությամբ հանքարդյունաբերության, շինարարության, սպասարկող ոլորտների աշխատանքային ռեսուրսների արտադրական գիտելիքը, կարողությունները միանգամից վերափոխել, օրինակ, մեքենասարքավորումներ արտադրելու կարողությունների և արտադրական գիտելիքի: Ուստի հնարավոր ճանապարհն աստիճանական անցումն է ավելի բարդ արտադրատեսակների արտադրությանը՝ խթանելով արտահանման համար նոր և/կամ ավելի բարդ ապրանքատեսակների թողարկումը, ինչպես նաև համապատասխան փոփոխություններ կատարելով բարձրագույն կրթության մասնագիտացումների ցանկում: Նոր և ավելի բարդ ապրանքների արտադրության կազմակերպման իրագործելիությունը, ինչպես նաև, դրան համապատասխան, կրթական ուղղությունների փոփոխությունը առանձին ուսումնասիրության առարկա են, որոնց արդյունքում պետք է մշակվի երկարաժամկետ ռազմավարություն՝ հստակ ճանապարհային քարտեզով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիր:
2. The Atlas of Economic Complexity: Mapping Paths to Prosperity Ricardo Hausman et. all, 2011, http://www.tinyurl.com/lf8y4uw
3. The Atlas of Economic Complexity: Mapping Paths to Prosperity, Ricardo Hausman et. all, 2013, https://growthlab.cid.harvard.edu/files/growthlab/files/atlas_2013_part1.pdf
4. The New Paradigm of Economic Complexity: Pierre-Alexandre Balland, Tom Broekel, Dario Diodato, Elisa Giuliani, Ricardo Hausmann, Neave O'Clery, David Rigby: Research Policy, Volume 51, Issue 3, 2022, 104450, ISSN 0048-7333, https://doi.org/10.1016/j.respol.2021.104450. https://www.sciencedirect.com/science/article/pii/S0048733321002420
5. A Structural Ranking of Economic Complexity. Schetter, U., 2019
6. https://atlas.cid.harvard.edu/rankings
7. https://oec.world/en/resources/about

Рузанна ТАДЕВОСЯН
Младший исследователь исследовательского центра «Амберд», аспирант, АГЭУ

АРМЕНИЯ И МИР

ИНДЕКС ЭКОНОМИЧЕСКОЙ СЛОЖНОСТИ: АРМЕНИЯ НА 76 МЕСТЕ

Индекс экономической сложности основан на разнообразии и повсеместном распространении экспортных корзин стран. Развитые страны, обладающие большим потенциалом продуктивных знаний, экспортируют сложную продукцию, такую как машины, химикаты, транспортные средства и т. д. А развивающиеся страны с ограниченными возможностями экспортируют продукцию низкой сложности, такую как горнодобывающую и сельскохозяйственную продукции. За последние 20 лет Армения ухудшила свое положение на 25 позиций из-за снижения диверсификации экспорта. Для диверсификации экспорта и производства сложных продуктов, государство должно эффективно вмешиваться, чтобы перераспределять ресурсы и направлять их на производство сложных продуктов.

Ключевые слова: *индекс экономической сложности, диверсификация, повсеместное распространение продукта, экспорт*

Ruzanna TADEVOSYAN
Junior researcher at «Amberd» Research Center, PhD student, ASUE

ARMENIA AND WORLD

ECONOMIC COMPLEXITY INDEX: ARMENIA IS THE 76TH

The Economic Complexity Index is based on the diversity and ubiquity of countries' export baskets. Developed countries, which have a great potential for productive knowledge, export complex products, such as machinery, chemicals, vehicles, etc. However, developing countries with limited capabilities export low-complexity products, such as mining and agricultural products. Over the last 20 years, Armenia has worsened 25 positions in the ECI ranking due to the decline in export diversification. In order to diversify exports and produce complex products, the government must intervene effectively to redistribute resources and direct them to the production of complex products.

Keywords: *economic complexity index, diversification, product ubiquity, exports*